



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

8 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գևորգ Սաֆարյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գևորգ Սաֆարյանը 19.01.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Ըստ դիմողի՝ իր համար բացասական իրավական հետևանքներ է առաջացրել թիվ ՎԴ/1934/05/14 գործով դատարանների կողմից իր նկատմամբ կիրառված և դատական ակտե-

րում անմիջականորեն վկայակոչված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը, որը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով՝ այն հարցը, թե դատարանի կողմից տվյալ վարչական գործով անմիջապես դատաքննություն կնշանակվի, թե՛ ոչ, ո՛չ պատասխանողի եւ ո՛չ հայցվորի համար հայտնի լինել չեն կարող: Այդ մասին պատասխանողն իրազեկվում է կամ դատաքննություն, կամ էլ նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշմամբ: Իսկ դատաքննություն նշանակելու մասին որոշումն ստանալու պահից պատասխանողը զրկվում է հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքից:

Դիմողը նաեւ գտնում է, որ հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի իրականացման համար նախատեսված օրենսդրական կարգավորումը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, չի կարող կանխատեսելի համարվել պատասխանողի համար և կարող է հանգեցնել վերջինիս դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների խախտման:

Միաժամանակ, դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ Գևորգ Սաֆարյանի դիմումի եւ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Գևորգ Սաֆարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Գևորգ Սաֆարյանին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

8 փետրվարի 2016 թվականի  
ՍԴԴԿՈ/2-3